# Վահան Յովհաննէսեան

## Ազգային ժողովի նախագահի տեղակալ



Ծնուել է 1956թ. Օգոստոսի 16-ին Երեւանում:

1978թ. աւարտել է Մոսկուայի մանկավարժական համալսարանը: Պատմաբան: Հնագէտ: Պատմական գիտութիւնների թեկնածու:

1980-1989թթ. «Էրեբունի» թանգարանում եղել է գիտաշխատող, գիտահետազօտական բաժնի վարիչ, 1989թ. Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան բաժնում՝ գիտաշխատող:

1990-1992թթ. մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին:

1990-1992թթ.՝ ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական Կոմիտէի, 1992-1995թթ.՝ ՀՅԴ Բիւրոյի անդամ: 1995-1998թթ. բանտարկուած է եղել՝ քաղաքական դրդապատճառներով (հետագայում չհաստատուած մեղադրանքներով):

1998-1999թթ. աշխատել է ՀՀ Նախագահի խորհրդական, տեղական ինքնակառավարման հարցերով յանձնաժողովի նախագահ:

1999-2003թթ.՝ ԱԺ պատգամաւոր (թիւ 17 ընտրատարածք): ԱԺ պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ: ՀՅԴ խմբակցութեան անդամ:

2003-2007թթ.՝ ԱԺ պատգամաւոր (համամասնական ընտրակարգ, ՀՅԴ): ՀՅԴ խմբակցութեան անդամ: ՀՅԴ Բիւրոյի անդամ:

2003թ. Յունիսի 12-ին ընտրուել է ԱԺ նախագահի տեղակալ:

2007թ. Մայիսի 12-ին ԱԺ պատգամաւոր է ընտրուել համամասնական ընտրակարգով ՀՅԴ կուսակցութիւնից:

2007թ. Յունիսի 7-ին ընտրուել է ԱԺ փոխնախագահ:

Ամուսնացած է, ունի երկու երեխայ: